ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲԽ-ԷՍ-2019/09

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով «ԴԻՆՄԱՌ» ՍՊԸ-ի կողմից 21.01.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«ԴԻՆՄԱՌ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«ԴԻՆՄԱՌ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 21.01.2019թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«1. Բողոքի փաստական հիմքերը.

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար «Երևան քաղաքի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթ:

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքների ձեռքբերման նպատակով հրապարակված հրավերի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքների» ձեռքբերումը, որոնք խմբավորված են «12» չափաբաժիններում՝

1.Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքներ,

2. Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքներ,

3. Շենգավիթ վարչական շրջանի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքներ,

4. Նուբարաշեն վարչական շրջանի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքներ,

5. Նորք-Մարաշ վարչական շրջանի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքներ,

6. Կենտրոն վարչական շրջանի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքներ,

7. Էրեբունի վարչական շրջանի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքներ,

8. Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքներ,

9. Արաբկիր վարչական շրջանի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքներ,

10. Ավան վարչական շրջանի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքներ,

11. Նոր Նորք վարչական շրջանի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքներ,

12.Աջափնյակ վարչական շրջանի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքներ,

Մրցույթին մասնակցության հայտ են ներկայացրել.

1. «Նուբարաշեն» ՓԲԸ-ն /4-րդ չափաբաժնի մասով/,

2. «Քնաքեռ-Զեյթուն Բարեկարգում» ՓԲԸ-ն /2-րդ չափաբաժնի մասով/,

3.«Վարդավառ զբոսայգի» ՓԲԸ-ն /7-րդ չափաբաժնի մասով/,

4. «Դինմառ» ՍՊԸ-ն /4-րդ չափաբաժնի մասով/,

5. «Նոր Նորք կանաչապատում» ՓԲԸ-ն /11-րդ չափաբաժնի մասով/,

6. «Դավթաշենի կանաչապատում» ՓԲԸ-ն /1-ին չափաբաժնի մասով/,

7. «Շենգավիթ-կանաչապատում» ՓԲԸ-ն /3-րդ չափաբաժնի մասով/,

8. «Արաբկի կամար» ՓԲԸ-ն /9-րդ չափաբաժնի մասով/,

9. «Աջափնյակ կանաչապատում» ՓԲԸ-ն /12-րդ չափաբաժնի մասով/,

10. «Կենտրոն կանաչապատում» ՓԲԸ-ն /6-րդ չափաբաժնի մասով/,

11. «Կանաչ Բարձրունք» ՓԲԸ-ն /5-րդ չափաբաժնի մասով/,

12. «Ավան կանաչապատում» ՓԲԸ-ն /10-րդ չափաբաժնի մասով/,

13. «Բրուս» ՍՊԸ-ն և «Սևերտորգ» ՍՊԸ-ն համատեղությամբ /8-րդ չափաբաժնի մասով/,

14. «Ագրոատոմ» ՍՊԸ-ն /5-րդ չափաբաժնի մասով/:

Գնահատող հանձնաժողովի 2019թ. հունվարի 8-ի թիվ 3 արձանագրության համաձայն՝ բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատվել են բավարար:

Գնահատող հանձնաժողովի 2019թ. հունվարի 8-ի թիվ 3 արձանագրության համաձայն գների նվազման բանակցությունների նպատակով գնման ընթացակարգը ընդհատվել է մինչև բանակցությունների նպատակով հրավիրված հանձնաժողովի նիստը:

Նույն արձանագրությամբ որոշվել է գների նվազեցման միաժամանակյա բանակցությունները անցկացնել 10.01.2019թ. ժամը 10:00-ին:

Հատկանշական է այն հանգամանքը, որ թիվ 3 արձանագրությունը հրապարակվել է ոչ թե մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այլ 10.01.2019թ.-ին ժամը 15:30-ին, այսինքն, փաստացի բանակցություններից հետո:

Բանակցությունների անցկացման նպատակով էլեկտրոնային ծանուցում չի ուղարկվել «Դինմառ» ՍՊԸ-ին:

Գնահատող հանձնաժողովը 2019թ. հունվարի 10-ի թիվ 4 արձանագրությամբ 4-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Նուբարաշեն» ՓԲԸ-ն:

2. Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու ... գնահատող հանձնաժողովի ...գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի՝Յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու ... գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին.

Տվյալ դեպքում հիմք ընդունելով վերը նշված հոդվածների պահանջները՝ ներկայացնում եմ սույն բողոքը:

Այսպես, Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքների ձեռքբերման նպատակով հրապարակված հրավերի համաձայն՝ գնումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը նույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Նույն մասի համաձայն՝ կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի՝ հրավերը պետք է պարունակի հայտով ներկայացվող գնի հաշվարկման կարգը, ներառյալ՝ գինը արտարժույթով ներկայացվելու դեպքում դրա փոխարժեքը:

Տվյալ դեպքում թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2 ծածկագրով բաց մրցույթի հրավերը չի պարունակել գնի հաշվարկային կարգը, գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը, քանի որ գնումն իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 40-րդ հոդվածի 5-րդ մասի ա/ կետի՝ եթե գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Տվյալ դեպքում, քանի որ թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2 ծածկագրով մրցույթն իրականացվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման համար գնահատող հանձնաժողովը ոչ գնային պայմանները բավարարող

գնահատված բոլոր մասնակիցների հետ վարում է միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները, եթե ոչ, ապա նիստը պետք է կասեցվեր և մեկ աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ծանուցվեր բոլոր մասնակիցներին բանակցությունների տեղի, օրվա և ժամի մասին:

Գնահատող հանձնաժողովը 2019թ. հունվարի 8-ի թիվ 3 արձանագրության 3-րդ կետով որոշում է ընդունել բանակցությունների հրավիրել միայն «Կենտրոն Կանաչապատում» ՓԲԸ-ին՝ 6-րդ չափաբաժնի մասով, «Վարդավառ զբոսայգի» ՓԲԸ-ին՝ 7-րդ չափաբաժնի մասով և «Բրուս» ՍՊԸ-ին և «Սևերտորգ» ՍՊԸ-ին՝ 8-րդ չափաբաժնի մասով:

Այսինքն, վերոգրյալից հետևում է, որ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել բոլոր մասնակիցների միաժամանակյա (ըստ չափաբաժինների) բանակցություններին հրավիրելու փոխարեն բանակցությունների հրավիրել միայն թվով 3 մասնակիցների, որոց մեջ բացակայում է «Դինմառ» ՍՊԸ-ն:

Համաձայն նույն կետի 5-րդ մասի գ/ ենթակետի՝ բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը:

Տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը երբևէ էլեկտրոնային ձևով որևէ ծանուցում չի ուղարկել «Դինմառ» ՍՊԸ-ին և բանակցությունները վարել է առանց «Դինմառ» ՍՊԸ-ի իմացության և մասնակցության:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 40-րդ հոդվածի 5-րդ մասի դ/ կետի՝ յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը:

Այսինքն, վերոգրյալից հետևում է, որ քանզի «Դինմառ» ՍՊԸ-ն չի մասնակցել բանակցությունների, ուստի վերջինս իր կամքից անկախ հնարավորություն չի ունեցել մյուս մասնակիցների համար հրապարակել իր կողմից ներկայացված գնային առաջարկը, ինչպես նաև չի կարողացել մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը անհրաժեշտության դեպքում վերանայել իր առաջարկը:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 40-րդ հոդվածի 5-րդ մասի «ե» կետի՝ բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ մասնակիցների ներկայացրած գների, որոնց գինը չի գերազանցում այդ գնումը

կատարելու համար հատկացված ֆինանսական միջոցների չափը, որոշվում ու հայտարարվում են առաջին և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները:

Տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովը 2019թ. հունվարի 10-ի թիվ 4 արձանագրությամբ որոշել է բոլոր չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին, այդ թվում նաև 4-րդ չափաբաժնի մասով: Ստացվում է բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, գնահատող հանձնաժողովը առանց «Դինմառ» ՍՊԸ-ի առաջարկած գինը լսելու, որոշում է կայացրել 4-րդ չափաբաժնով «Նուբարաշեն» ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասով:

Այսինքն, վերոգրյալը բավարար է հաստատապես պնդելու համար, որ թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19 ծածկագրով գնահատող հանձնաժողովի 2019թ. հունվարի 10-ի թիվ 4 արձանագրության 2-րդ բաժնի 2.1 կետի 4-րդ ենթակետը կայացվել է օրենքի պահանջների խախտմամբ և ենթակա է դադարեցման:

Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի՝ մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

Տվյալ դեպքում հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է եղել մինչև 2019 թվականի հունվարի 8-ը:

Այսինքն, վերոգրյալից հետևում է, որ մինչև 2019 թվականի հունվարի 3-ը ներառյալ, մասնակիցները իրավասու էին գրավոր պահանջել հրավերի պարզաբանում:

«Դինմառ» ՍՊԸ-ն՝ իր լիազորած անձի միջոցով, ղեկավարվելով Գնումների մասին ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, 2018թ. դեկտեմբերի 28-ին Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ներկայացրել է գրավոր պարզաբանում:

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի՝ քարտուղարը կազմակերպում է գնման ընթացակարգի վերաբերյալ պարզաբանումների տրամադրման աշխատանքները:

Չնայած օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ հարցման պատասխանը տրամադրվում է հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում, սակայն առ այսօր որևէ հարցման պատասխան «Դինմառ» ՍՊԸ-ն չի ստացել, ինչից էլ հետևում է, որ քարտուղարը չի կազմակերպել գնման ընթացակարգի վերաբերյալ

պարզաբանումների տրամադրման աշխատանքները, որի հետևանքով ևս մեկ անգամ խախտվել է «Դինմառ» ՍՊԸ-ի իրավունքները:

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի՝ գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է՝

2) գնման անհրաժեշտությունը և գնման ձևի ընտրության հիմնավորումը.

4) գնման վերաբերյալ ստացված հարցումները և ներկայացված պարզաբանումները.

8) հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը.

9) պայմանագիրը, իսկ գնման գործընթացի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.

Տվյալ դեպքում ոչ թիվ 3, և ոչ էլ թիվ 4 արձանագրությունները չեն պարունակում տեղեկություններ գնման անհրաժեշտության և գնման ձևի ընտրության վերաբերյալ, չեն պարունակում տեղեկություններ գնման վերաբերյալ ստացված հարցումների և ներկայացված պարզաբանումների վերաբերյալ: Ավելին, արձանագրությունների մեջ բացակայում է նաև «Դինմառ» ՍՊԸ-ի հայտի մերժման հիմնավորումները:

Այսինքն, նշվածից հետևում է, որ սույն գնման գործընթացում խախտվել է նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջները:

Ավելորդ չեմ համարում վկայակոչել նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1)գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Այսինքն, վերոգրյալից հետևում է, որ Գնումների մասին ՀՀ օրենքի կարևորագույն սկզբունքը գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, ոչ խտրական հիմունքներով կազմակերպումն է:

Մրցակցային, ոչ խտրական, թափանցիկ գնման գործընթաց կազմակերպելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ գնահատող հանձնաժողովի անդամները լինեն անկողմնակալ:

Մարդու իրավունքների պրակտիկայում մշակվել է անկողմնակալության 2 չափանիշ՝

ա/ սուբյեկտիվ մոտեցում՝ գործը քննող անձը նախապես չի ունեցել գործի առարկայի վերաբերյալ անձնական համոզմունք;

բ/ օբյեկտիվ մոտեցում՝ առկա են այդ հարցում ողջամիտ կասկածները բացառող բավարար երաշխիքներ:

Այն, որ գնահատող հանձնաժողովի կողմնակալության վերաբերյալ առկա է օբյեկտիվ և սուբյեկտիվ կասկածներ, հիմնավորվում է այն հանգամանքով, որ մրցույթին մասնակցում են Երևանի քաղաքապետարանի կողմից հիմնադրված կազմակերպությունները ու այդ իսկ պատճառով Երևանի քաղաքապետարանը ամեն կերպ փորձել է այնպես անել, որ «Դինմառ» ՍՊԸ-ն չմասնակցի բանակցություններին, քանի որ մտավախություն է ունեցել, որ կարող է բանակցությունների ընթացքում «Դինմառ» ՍՊԸ-ն 4-րդ չափաբաժնի մասով առաջարկի ավելի էժան գին, քան «Նուբարաշեն» ՓԲԸ-ն:

Գնումների մասին ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության սկզբունքը նախատեսում է նաև մասնակիցների համար հավասար պայմանների ապահովումը: Իսկ տվյալ դեպքում հավասար պայմանների սկզբունքը ենթադրում է նաև մրցակցող կողմերի լսվելու իրավունքը: Այսինքն, վերոգրյալից հետևում է, որ քանզի գնահատող հանձնաժողովը չի պատասխանել բողոքաբերի հարցմանը, չի ծանուցել բանակցությունների վերաբերյալ, բանակցությունները անցկացրել է առանց «Դինմառ» ՍՊԸ-ի կարծիքը լսելու, ուստի միանշանակ է, որ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված սկզբունքները:

«Դինմառ» ՍՊԸ-ն 08.02.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացրել է Բողոքի լրացում, որով հայտնել է հետևյալը.

«2019թ. հունվարի 24-ին www.gnumner.am կայքէջում հրապարակվել է թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2 ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստերի թիվ 5 և թիվ 6 արձանագրությունները:

Գնահատող հանձնաժողովի 2019թ. հունվարի 18-ի թիվ 5 արձանագրությամբ ուսումնասիրության է ենթարկվել ՀՀ ԿԱ ՊԵԿ ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Գնահատող հանձնաժողովի 2019թ. հունվարի 23-ի թիվ 6 արձանագրության 3-րդ կետի համաձայն թիվ 4 չափաբաժնի մասով ընտրված մասնակից է հանդիսացել «Նուբարաշեն» ՓԲԸ-ն, որի առաջարկած գինը առանց ԱԱՀ-ի կազմել է 23 995 000 ՀՀ դրամ:

Նույն արձանագրության 4-րդ կետով որոշում է կայացվել Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքների պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացել «Նուբարաշեն» ՓԲԸ-ին:

22.01.2019թ. ներկայացված բողոքի մեջ, ի թիվս այլ փաստերի, հիմնավոր կերպ նշվել է, որ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի սկզբունքները / մրցակցային, ոչ խտրական, թափանցիկ, հավասար պայմաններով գնման գործընթացի անցկազման սկզբունքները/, քանի որ չնայած ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետով նախատեսված բանակցություններ վարելու իմպերատիվ պահանջի, գնահատող հանձնաժողովը չի ծանուցել «Դինմառ» ՍՊԸ-ին և չի հրավիրել բանակցությունների:

Մասնավորապես՝

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի ա/ պարբերության՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ/ պարբերության՝ հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

Այսինքն, վերոգրյալից հետևում է, որ առաջարկված գների նվազեցման նպատակով բոլոր մասնակիցների հետ միաժամանակյա բանակցություններ վարվում են՝

1. առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ

2. ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ

ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը, կամ

3. գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Եթե նորմատիվ իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է ... «կամ» շաղկապով բաժանված պայմաններով, ապա ... «կամ» շաղկապով բաժանված պայմանների մասով բավական է թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը:

Այսինքն, եթե վերը նշված 3 պայմաններից առնվազն մեկը տվյալ մասնակցի մասով առկա է, ապա գնահատող հանձնաժողովը այդ անձին պետք է հրավիրի բանակցության:

Սույն գործով քանի որ գնումն իրականացվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ուստի գնահատող հանձնաժողովը պարտավոր էր բոլոր մասնակիցների հետ իրականացնել միաժամանակյա բանակցություններ, և ոչ թե բանակցություններ իրականացներ իր ցանկությամբ նախընտրած մասնակցի հետ:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի ա/ենթակետի՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները՝ արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ:

Հիմք ընդունելով վերոգրյալը սույն գործով ի թիվս այլ պահանջների անհրաժեշտ է արգելել գնահատող հանձնաժողովին կատարել որոշակի գործողություն, այն է՝ արգելել Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքների պայմանագիր կնքել «Նուբարաշեն» ՓԲԸ-ի հետ, ինչպես նաև կայացնել որոշում «Դինմառ» ՍՊԸ-ին 4-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակց ճանաչելու վերաբերյալ, քանի որ եթե Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքների համար «Նուբարաշեն» ՓԲԸ-ի գնային առաջարկը կազմում է 23995000 ՀՀ դրամ, ապա «Դինմառ» ՍՊԸ-ն նույն աշխատանքների կատարման համար առաջարկում է ավելի ցածր գին՝ 23900000 ՀՀ դրամ/ առանց ԱԱՀ-ի/ :

Մատնանշած հանգամանքների հիմքով խնդրում եմ.

1.Դադարեցնել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ Երևան քաղաքի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2 ծածկագրով բաց մրցույթի գնման

ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2019թ. հունվարի 10-ի թիվ 4 արձանագրության 2-րդ բաժնի 2.1 կետի 4-րդ ենթակետը /այն կետը,որով 4-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Նուբարաշեն»ՓԲԸ-ն/:

2.Դադարեցնել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ Երևան քաղաքի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2 ծածկագրով բաց մրցույթի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2019թ. հունվարի 23-ի թիվ 6 արձանագրության 4-րդ կետը /որով 4-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Նուբարաշեն» ՓԲԸ-ն/ և 4.1 կետը /այն մասով, որով Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքների պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացվում «Նուբարաշեն» ՓԲԸ-ին/:

3. «Դինմառ» ՍՊԸ-ին 23900000 ՀՀ դրամ / առանց ԱԱՀ/ գնային առաջակով ճանաչել որպես առաջին տեղը զբաղեցրած մասնակից»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Էմիլ Չատինյանը:

2. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Բողոքներ քննող անձը դիմել է Երևանի քաղաքապետարանին՝ խնդրելով Բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, նույն հոդվածով սահմանված ժամկետում Բողոքներ քննող անձին տրամադրել գրավոր դիրքորոշում, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Գագիկ Հուրոյանը:

3. <u>ԳԲՔԱ-ԷՍ-2019/10 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ԴԻՆՄԱՌ» ՍՊԸ-ի կողմից 21.01.2019թ. ներկայացված բողոքը, բողոքի լրացումը և կից փաստաթղթերը, «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2»

ծածկագրով բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 08.01.2019թ. նիստի թիվ 3, 10.01.2019թ. նիստի թիվ 4, 18.01.2019թ. նիստի թիվ 5, 23.01.2019թ. նիստի թիվ 6 արձանագրությունները.

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ), որին ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «ԴԻՆՄԱՌ» ՍՊԸ-ն և «ՆՈՒԲԱՐԱՇԵՆ» ՓԲԸ-ն:

Մրցույթի հրավերի անբաժանելի մաս կազմող Պայմանագրի նախագծի 7.15 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

Հանձնաժողովի 08.01.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության՝

- 4.1 կետի համաձայն՝ Մրցույթի 4-րդ չափաբաժնի մասով «ՆՈՒԲԱՐԱՇԵՆ» ՓԲԸ-ի կողմից առաջարկված գինը կազմել է 23 995 000 ՀՀ դրամ, իսկ «ԴԻՆՄԱՌ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված գինը՝ 24 900 000 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ):

- 5.1 կետի համաձայն՝ գնման ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով «Կենտրոն կանաչապատում» ՓԲԸ-ի, 7-րդ չափաբաժնի մասով «Վարդավառ զբոսայգի» ՓԲԸ-ի, 8-րդ չափաբաժնի մասով «Բրուս» ՍՊԸ-ի և «Սեվերտորգ» ՍՊԸ-ի համատեղությամբ գնի առաջարկները գերազանցում են նախահաշվային արժեքը:

- 5.2 կետի համաձայն՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետը՝ 1-ին տեղ զբաղեցնող մասնակցին որոշելու նպատակով բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցների հետ կանցկացվեն գների նվազեցման բանակցություններ: Սահմանված կարգով նշված չափաբաժինների մասով հայտ ներկայացրած մասնակցին ծանուցել գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների անցկացման մասին, որը կանցկացվի 10.01.2019թ. ժամը 10:00-ին:

Այնուհետև, 10.01.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության 2.1 կետով Հանձնաժողովը որոշել է Մրցույթի 4-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «ՆՈՒԲԱՐԱՇԵՆ» ՓԲԸ-ին:

23.01.2019թ. նիստի թիվ 6 արձանագրության 4.1 կետով Հանձնաժողովը որոշել է Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքների պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «ՆՈՒԲԱՐԱՇԵՆ» ՓԲԸ-ին:

«ԴԻՆՄԱՌ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով հայտնել է, որ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթ իրականացվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, հետևաբար գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման համար գնահատող հանձնաժողովը ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ պետք է վարեր միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները, եթե ոչ, ապա նիստը պետք է կասեցվեր և մեկ աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ծանուցվեր բոլոր մասնակիցներին բանակցությունների տեղի, օրվա և ժամի մասին: Մինչդեռ, գնահատող հանձնաժողովը 2019թ. հունվարի 8-ի թիվ 3 արձանագրության 3-րդ կետով որոշում է ընդունել բանակցությունների հրավիրել միայն նախահաշվային գինը գերազանցող գնային առաջարկներ ներկայացրած մասնակիցներին՝ «Կենտրոն Կանաչապատում» ՓԲԸ-ին՝ 6-րդ չափաբաժնի մասով, «Վարդավառ զբոսայգի» ՓԲԸ-ին՝ 7-րդ չափաբաժնի մասով, «Բրուս» ՍՊԸ-ին և «Սևերտորգ» ՍՊԸ-ին՝ 8-րդ չափաբաժնի մասով: Բողոքաբերը նշեց, որ «ԴԻՆՄԱՌ» ՍՊԸ-ն՝ չմասնակցելով գնային առաջարկների նվազեցման շուրջ վարվող բանակցություններին, հնարավորություն չի ունեցել մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը վերանայելու իր գնային առաջարկը: Այսինքն, սատցվել է մի իրավիճակ, երբ բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, գնահատող հանձնաժողովն առանց «Դինմառ» ՍՊԸ-ի վերանայված (նվազեցված) գինը լսելու, որոշում է կայացրել 4-րդ չափաբաժնով «Նուբարաշեն» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու վերաբերյալ, դրանով իսկ խախտելով «Դինմառ» ՍՊԸ-ի օրինական շահերը:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ բողոքաբերը պնդեց Բողոքի քննության շրջանակներում հայտնած գրավոր դիրքորոշումն ամբողջությամբ, և Բողոքներ քննող անձին և Պատվիրատուի ներկայացուցչին

խնդրեց նկատի ունենալ, որ Ընկերությունը պատրաստակամ է Մրցույթի շրջանակներում ներկայացնել Հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար նվազեցված գնային առաջարկ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք)՝

- 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքի վրա՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:

- 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Նույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել:

- 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝

1) երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Նույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ.

2) նույն օրենքով նախատեսված այլ դեպքերի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող

գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթն իրականացվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

- Մրցույթի 4-րդ չափաբաժնի մասով «ՆՈՒԲԱՐԱՇԵՆ» ՓԲԸ-ի կողմից առաջարկված գինը կազմել է 23 995 000 ՀՀ դրամ, իսկ «ԴԻՆՄԱՌ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված գինը՝ 24 900 000 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ):

- Առաջին տեղ զբաղեցնող մասնակցին որոշելու նպատակով Հանձնաժողովը որոշել է բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցների հետ անցկացնել գների նվազեցման շուրջ բանակցություններ:

- Բանակցությունների վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ծանուցվել են՝ գնման ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով «Կենտրոն կանաչապատում» ՓԲԸ-ն, 7-րդ չափաբաժնի մասով «Վարդավառ զբոսայգի» ՓԲԸ-ն, 8-րդ չափաբաժնի մասով «Բրուս» ՍՊԸ-ն և «Սևերտորգ» ՍՊԸ-ն համատեղությամբ, որոնց գնի առաջարկները գերազանցել են Մրցույթի նախահաշվային արժեքը համապատասխան չափաբաժինների մասով:

- «ԴԻՆՄԱՌ» ՍՊԸ-ն գների նվազեցման շուրջ վարվող բանակցությունների վերաբերյալ չի ծանուցվել:

- Հանձնաժողովը որոշել է Մրցույթի 4-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «ՆՈՒԲԱՐԱՇԵՆ» ՓԲԸ-ն:

-Հանձնաժողովը որոշել է Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքների պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «ՆՈՒԲԱՐԱՇԵՆ» ՓԲԸ-ին:

Հիմք ընդունելով վերոգրյալը, և հաշվի առնելով, որ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթն իրականացվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Հանձնաժողովը՝ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթի 4-րդ չափաբաժնի մասով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների, այդ թվում «ԴԻՆՄԱՌ» ՍՊԸ-ի հետ պարտավոր էր վարել միաժամանակյա բանակցություններ, մինչդեռ Մրցույթի առանձին չափաբաժինների մասով Հանձնաժողովը միաժամանակյա բանակցություններ է իրականացրել միայն այն մասնակիցների միջև, որոնց կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցել են Մրցույթի նախահաշվային գները, ինչի արդյունքում զրկել է «ԴԻՆՄԱՌ» ՍՊԸ-ին առաջարկված գինը վերանայելու հնարավորությունից:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ Հանձնաժողովի կողմից խախտվել է Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով նախատեսված պահանջը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ԴԻՆՄԱՌ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված Բողոքներ քննող անձին 21.01.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

2. Պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ Երևան քաղաքի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել՝

- 2019թ. հունվարի 10-ի թիվ 4 արձանագրության 2-րդ բաժնի 2.1 կետի 4-րդ ենթակետով՝ «Նուբարաշեն»ՓԲԸ-ին 4-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչվելու վերաբերյալ կայացված որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում,

- 2019թ. հունվարի 23-ի թիվ 6 արձանագրության 4-րդ կետով «Նուբարաշեն» ՓԲԸ-ին 4-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչվելու վերաբերյալ կայացված որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում,

- 2019թ. հունվարի 23-ի թիվ 6 արձանագրության 4.1 կետով «Նուբարաշեն» ՓԲԸ-ին Նուբարաշեն վարչական շրջանի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքների պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ կայացված որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ